ի սբ. փրկչէն. կարդասցին և այլ ի վանքն դարձուսցեն...» Կարապետ վրդ.ի այս յիշատակարանէն զատ՝ նոյն ձեռագրին մէջտեղը ղուսանցի վրայ գրուած կը տեսնուի հետևեալը. «տէր Ցս. ողորմիա կրպ. վրդ.ին եմացո. ամէն». տեսնել նաև (ժպե. Հատ. Ա. էջ 234)։ Ուրիշ ժամանակագիր մը, յիշատակարանի մը համաձայն, կը գրէ թէ՝ Կարապետ վրդ. բացի Ս. Փրկչի վանքին վերաշինութենէն, կը նորոգէ նաև «զեկեղեցին գերեզմանի Աստուածածնայ ի Գեթսեմանի բազում աշխատութեամբ, զի գերեզման եւ եթ երեւէր. իսկ յեկեղեցին լցեալ աւազով ի հեղեղէ անտի, և զրունք ինչ էին մերձ գերեզմանին սուրբ Աստուածածնայ որ ի ռամկաց զրունք զժոխոց անուանէին. զայնս քակեալ և ծեփեալ է, որպէս երևի, ի վաղու ժամանակաց ի վիմէ փորեալ գերեզմանք են լեալ...» (ՄՁ. Թ. 1818)։ Մեր հոս յիշած ժամանակագիրը չգիտցուիր թէ ո՛ր յիշատակարանի վրայ յենլով՝ Կարապետ վրդ. Երուսաղեմացին կը դասէ Ս. Յակոբի վանքի պատրիարքներու շարքին մէջ. (Յպե. էջ 40)։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ԱԿՆՑԻ.—Մբ. 1876 ին։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ԱՄԱՍԻԱՑԻ.—Մբ. 1780 ին, Նւ. Ամասիոյ։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ԱՄԱՍԻԱՑԻ.—Մբ. 1855 ին,

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ԱՐՄՏԱՆՑԻ.—Մբ. 1810 ին, կ'ընդօրինակէ Ս. Էջմիածնի միաբան Հռոմկլայեցի Պետրոս վրդ.ին Աստուածաբանութիւնը։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ԲԵՐԻԱՑԻ.— 1757 ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ԳԱԼՖԱՅԵԱՆ, ԷՎԷՐԷԿՑԻ.—Մբ. Զռ. 1830 ին, Առ. Տրապիզոնի (1839-42)՝ իր պաշտօնավարութեան սկիզբը, Տրապիզոնի մէջ իր կողմէ պատրաստուած կահուց և կարասեաց տետրակի մը ներքև կը գրէ հետեւեալը «... Այցելու եւ վերատեսուչ նուաստ ծառայ ծառայիցն Աստուծոյ Ս. Երուսաղէմի միաբան Կարապետ վրդ. Կեսարու Էվէրէկ գեղջէ Մ. Կարապետ Ղալֆայեան քիւրքճի զատէ»։ Կը ձեռնադրուի եպս. 1851 ին, Առ. Սեբաստիոյ (1851-1869), կրկին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը (1857-1859)։ 1869 էն յետոյ կը մնայ Ս. Նշանի վանքին մէջ իբրև վանահայր։ Կը վախճանի 1877 ին. տեսնել նաև (Պ. Սեբաստիոյ. էջ 306)։